

14. Բարոզեաց զառաքեալն եւ ընակեցաւ ի սուրբսն :

Եւսպէս բոլոր սպազբութիւնները : Սակայն քիչ չեն ան զրչազիր օրինակները՝ որոնք, յունականին համեմատ, կը կարգան յառաքեալն, ինչպէս որ կարգացած են Ներսէս Գ. եւ Լամբրոնացին Պատարագամատուցին մէջ : Բայց նաեւ ան սխալ ընթերցուածը՝ զառաքեալսն, որով մերկններէն շատերը ուղեցին Քրիստոսի համար ըսուած իմանալ, բաւական հնութիւն ունի. անանկ որ բոլորովին բացայայտ է որ Լամբրոնացին իր առջեւն երկու ընթերցուածն ալ ունեցած է եւ կրկին իմաստով ալ տուած է<sup>1</sup> : Նոյն իսկ Գրիգոր Նարեկացի՝ որ երեք վար անկէ առաջ ծագեցաւ, յայտնի կը տեսնուի որ «զառաքեալն», կը կարդայ : Սակայն եւ այնպէս Սխիթարայ օրովը եղած Սոյ սիւնհոդոսին հրամանաւ եղած լատին թարգմանութիւնը անանկ օրինակէ մ՝եղած է՝ ուրուն մէջ «յառաքեալն», կը կարդացուէր :

Եւ վերջին ընթերցուածը՝ «բարոզեաց յառաքեալն», որն որ մի միայն հարազատն է, իսկ եւ իսկ «զառաքեալն», չփոխուեցաւ. հապա նախ եղաւ՝ «բարոզեաց զառաքեալսն», ինչպէս որ ունին շատ զրչազիրներ, որն որ այս տեղ իմաստ մը չտալուն համար՝ փոխուեցաւ եղաւ՝ «բարոզեաց զառաքեալն», եւ այսպէս կը գործածուի հիմայ ամէն տեղ, բայց ուրիշ չէ :

15. Հաւատամք եւ ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական եկեղեցի :

Գրեթէ զարմացմամբ մը դիտած էր Հ. Փափազեան որ քանի մը ձեռագրաց մէջ հոս սանկ զրուած ըլլայ. «Հաւատամք եւ յայս մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի», : Սակայն այսպէս իսկ կը պահանջէ յոյն բնագիրը : Եւ «յայս» ը ձեռագրաց մէջ զանազան շփոթութեան հանգիւյսած է. հասարակօրէն իրմէ ետքը եկած միին հետ խառնուելով՝ եղած է այսմ կամ յայսմիկ՝ կամ իրեն յ նախդիրը իրմէ նախնիթաց «Հաւատամք», բառին հետ ձուլելով՝ եղած է Հաւատաւայ այսմ եւ կամ ի յայս միայն զեղելով մին, կամ բոլորովին մի միայնը խափանելով՝ յայս ընդհանրական, ինչպէս Գրիգորի Արշարունեաց եպիսկոպոսի ընծայուած զրութեան մէջներ, կամ վերջապէս անանկ ինչպէս 1248ին զրուած Վենետիկ երկաթագիր ԻԲ. Ժամագիրքը կը կարդայ «Հաւատաւայսմ միայն ընդհանրա-

<sup>1</sup> Մէյ մ'ըսելով. «Որ էջն ի Յորդանան ազաւակերպ իջմամբ եւ Գրիգորի ըստ ձայնին հայրականի», մէյ մ'ալ քիչ մը ետքը. «Հաստատարանութիւն սրբոյ Սիւնհոդոսին» յօդին է՝ Գրիգորի է՝ յաւելումն վանն աստուածաբանութեան

Հոգեւոյն սրբոյ, յայսմ հետեւ եւ զանհատականն ի նմանե տրւութիւն, զի Գրիգորիցաւ նա առաջնութիւն յոյրտա աշխարհի եւ բնութեայ ի սուրբն :

<sup>2</sup> Չեռագիրք մատենայր. Վիեննայի Վանայ. Թիւ 154 եւ 173 :